

Quilguala

LHk

Febrero 1912

891.99

2-29



891.542-3

Q-29

19 NOV 1919

Ա. ԶԱՆԵԱՆ

Լ Ի Լ Ի

ЛИЛИ

А. ДЖАНЫАНЪ.

ԳՐԱՆՔ 20 ԿՈՊ.

Բազմ, արտատվում է «ՏՐԱԿ»-ով.  
Баку, типогр. «ТРУДЪ».  
1912 г.



W 755

Ա. ՋԱՆԵԱՆ

891.542-3

Զ-ՁԳ



Լ Ի Լ Ի

3556



ԼԻԼԻ

Ա. Ժանյան.

Բազմ, սպարան «ՏՐՈՒԴ»:

Բազմ, տիպ. «ՏՐՈՒԴ».

1912 թ.



## Ց Ա Ն Կ

1. Գեղի Սրեր . . . . . 5—6.
2. Լիլի . . . . . 7—21.
3. Խոհարարունու յիշատակարանից . 23—32.





# ԴԵՊԻ ԱՐԵՒՐ

Բասպօղիա

Գարունը մօտենում է, երկնակամարի վրայ սև ու մառյալ ամպեր էլ չեն երևում, և արեգակը նման է մի անհույս հրդեհի ոսկու մէջ թաթախուած, դուրս եմ գալիս դուրսը: Հեռու դաշտերի վրայից երևում է հորիզոնը պարզ ու շողջողուն իսկ ձախ կողմից էլ աչքիս է ընկնում մի հարթ ու կապոյտ տարածութիւն—գա էլ ծովն է:

Մօտենում եմ երկուսին էլ:

Ողջոյն քեզ հորիզոն, ողջոյն քեզ և ծով, դուք անշափ նման էք Աօտըծուն և ձեր պատկերի առաջ պէտք է որ խոնարհվէր իմ գլուխը, և ես գալիս եմ մի խրճիթից ուր արեգակը ներս չէ մտել ամբողջ ձմեռը, ու ես գալիս եմ մի հասարակութեան միջից սրը երբէք չէ հասկանում ձեր գեղեցկութիւնը, և սրովհետև դուք նորից լուսաւորեցիք իմ սիրտը, ապա հազար ու հազար ողջոյն ձեզ:

Նայում եմ շուրջս, ո՛չ որ չը կայ. լուռ ու մտախոհ ծունր եմ դնում ու համբուրում գետինը, հողը տաք է ու գրաւիչ, իսկ սիրտս էլ մի առանձին քնքշութեամբ մօտենում է նրան—նստում եմ երկրի վրայ. օ՛, օ՛, ինչքան լաւ է ու սիրուն երբ մի քայլ մօտենում ես յաւիանութեան, այսքան տարիներ կոխկրտել այդ հողը և երբէք չառնել նրան քո սրտին, չհատոտել ու չսիրել, չհամբուրել և չասել որ դու աւելի աղին ես ու արդար քան ինքը մարդը, այն, դ՛ուր, իմ շիբլիմ և իմ պապերի երկիր անշափ ողջոյն քեզ:

Պառկում եմ մէջքիս վրայ, ո՛չ որ չը կայ. արեգակը փայլում է որպէս գարնանը, և ինձ մօտ, հէնց կողքիս, բոյսերի բողբոջ եմ նկատում—այդ կեանքն է որ սառած երկրից ձգւում է դեպի արեւը պայծառ ու սիրուն. և նա այնքան բարի է որքան ես, և այնքան արդար որքան ինքը բնութիւնը, դառնում եմ նրան էլ:

Օրհնութիւն և քեզ օ՛ կեանք, քեզ, որ հասունանալը նպատակ ես ընտրել, որ ձգտումը ընդունում ես աւելի, քան ամառուայ տօթին ծաբաւի մնալը, և մահուանդ ժամին փոշիդ հողմերին շանձնելը աւելի վեր ես դատում, քան սրտիդ վրայ սարսափի կուտակումը, ապա աճիր,



և ասա որ տանջուելլը աւելի լաւ է քան մեռած մնալը, և ձեզ բոլոր  
ապրողներինդ որ մի խենթ դժգոհութեամբ արեւի գեղեցկութիւնն էք  
վնասում, հազար ու հազար ողջոյն:

Նստում եմ վերստին, հողից խոնաւութիւն է գալիս զեռ բոլոր-  
բովին տար չէ. բայց այդ ինչից է որ մըջիւններ չեն երևում, թըռ-  
չուններ չը կան, և դաշտը այդպէս ամայի է արեւի տակ: Տեսողու-  
թիւնս լարում եմ ու լսում, ոչ որ չը կայ, մօտիկ արտի մէջ մի քանի  
չոր թփեր են երևում և ուրիշ ոչինչ. ոտիս տակից աւնում եմ մի  
բուռ հող և սկսում հետազոտել, նա այնքան կենսալից է ու դուրալի  
որ ուզում են գլխիս ածել, կրել կրծքիս վրայ, և ասել որ նա աւելի  
թանգակին է, քան իմ գոյութիւնը: Նայում եմ շարունակաբար, արեւի  
տակ նա նախ փափկել է և շերտերը հիւթալի դարձրել, սիրաբ խո-  
նաւ է մօր արցունքի նման որ երկունքի է սպասում, իսկ երեսին  
ընկած անցեալ տարայ կեանքերը բոլորը փթել են և նրան աւելի  
ուժեղացրել, կնշանակէ նա պատրաստ է նոր կեանքի համար, և այն  
լաւ կեանքի—ուրեմն կրկնակի ողջոյն նրան:

Վեր եմ կենում և սկսում թափառել, հեռու գիւղի ծայրից մի  
ձի է խրխնջում, ու արագաղը պատասխանում է նրան զիլ ու հըն-  
չական, ծովը ազամանդէ աչքերով անվերջ պսպղում է, և մի շուն  
վազում է գեպի ինձ նապաստակի յետեից:

— Հ'ը, այդ ո՞ր անիրաւն է որսի ետեւից ընկել:

Կանգնում եմ, ու շան հետ միտօին նոր միայն լսում, որ դաշտի  
մէջ երաժշտութիւն կայ որ բոլորին կանչում է գեպի իրան, և սը  
մեռածներին գեպի իրան կոչողը Արեւ ինքն է իր վառ ու առնական  
երգով որ այնպէս արձագանքում է բոլորի սրտերում:

Անում եմ գդակս ու ծնրադնում:

Օրհնութիւն և քեզ օ՛ մեծ Արեւ, դո՛ւ, որ լուսաճաճանչ պսակով  
երկրի զարդն ես կազմում, և յո գեղեցիկ շողերով անխախտ կոչում  
բոլոր մեռածներին կեանքի, դու աւելի մեծ աշխատանքով ես զբաղ-  
ւած քան բոլոր աշխատուորները որոնք միայն իրանց տէրերին են  
հարստացնում, և որովհետեւ դու աւելի ըմբոստ ես ու ժայռեղէն, ապա  
քո ծոցում արժէ այրել իմ բոլոր Աստուածները, որոնք այնքան ան-  
պէտք էին ու անարի, թոյլ՝ ու նահանջող:

Այն հազար ողջոյն ձեզ...

# Լ Ի Լ Ի

«Ուրախութիւնը տուած է գեղեցիկ մարմիններին, իսկ վիշտը գեղեցիկ հողիներին»:

Օսկար Ուայլդ:

«Գեղեցկութիւնը աչքի է ընկնում նրանով, որ մեր մէջ առաջացնում է անկամայական և աննշան բաւակա-նութիւն և այդ բաւականութիւնը վերագրում է տուեալ առարկային: Մեզ միշտ դուր է գալիս ձեռք և ոչ բովանդակութիւնը, լարարեթութիւնը ոչ այն, ինչ որ մենք մենակ է»:

Հերբարտ:

I.

— Ամեն առաւոտ իմ լուսամտաի մօտով նա գնում էր գործի, և ամեն առաւոտ ես լսում էի նոյն քայլերի ձայնը որ այնպէս դողացնում էր երկիրը իմ սրտի նման, երբ զգում էր նրա մօտենալը ինձ մօտ. և ամեն առաւոտ էլ նա գզակը առնում էր, և առնական ու սիրուն որպէս մի պատերազմիկ ասպետ, բարձր ու հնչուն ձայնով ասում:

— Յարգանքներս օրիօրդին:

Եւ ես գոհ ու հրճանիկ պատասխանում էի նոյն ձևով:

— Բարևներս երիտասարդին...

Այդ բոպէին ես ամեն ինչ մոռանում էի, և նա անցնում էր իմ մօտով որպէս հեղեղը տանելով իր հետ մի սիրտ, որ այնքան դողում է վճռական բոպէսերից. ու նա դանդաղ ու ժպտուն որպէս արշալոյսը որ այնքան բարի է գէպի տիրոջ ստեղծագործութիւնը, դառնում էր, ու աչքերով հարցնում:

— Երեւի հետեւում էք:

— Այն, ես հայեացքով հետեւում էի:



II.

Չարժէ սիրել կանանց և չարժէ հէնց այն պատճառով, որ նրանց շրջանում շատ սաէպ կարելի է գտնել միեւնոյն օրիպի գեղեցիկութիւններ իսկ տղամարդկանց մօտ այդ բոլորովին դժվար է, և դորա համար էլ հաղար անգամ աւելի արժէ այն, թէ ինչպէս կանայք սիրում են իրենց ընտրածին, մանաւանդ որ այդ ընտրածը նոր մարդ է, պատանի, թարմ ու կանոնաւոր որպէս Աստուծոյ ցնորքը, քան թէ մարդկանց՝ կանանց հետեւիլու: Եւ ահա իմ դեր մի 18 ամեայ անմաղ առնականութիւն էր. նուրբ ու գեղեցիկ քիթը յիշեցնում էր յունական մտքի դասական պատկերացումը, շրթունքները կարմիր էին որպէս դրախտից կախած նունը որի հետ հրեշտակներն են խաղում, իսկ վերի մասի աղեղնաձև սևութիւնը պուշակում էին մի նորածիլ բեղերի հետք որ այնպէս դարդարում է առնականութիւնը. այտերը արիւնով էին խմորած սպիտակագոյն մորթու հետ, իսկ աչքերը ամբողջ մի հնոց որ այնպէս վառում է կրքից, և եթէ այդ բոլորի վրա աւելացնենք և մի գեղեցիկ ճակատ բոլորակ լուսնի նման, այն ժամանակ պարզ կը լինի թէ ինչո՞ւ է կինը ձգտում տղամարդուն:

III.

Այս բոլորին երբ գրում եմ այս տողերը, նա անցնում է իմ մօտով և անցնում է որպէս ցնորքը որին երազում ես և որին չես կարողանում տիրել. կապոյտ շապիկը այսօր փոխւած է ճերմակի և այդ աւելի է գեղեցիկ դարձնում նրան, քայլերը համաչափ են երաժշտութեան տակափ պէս, իսկ դարգացած և հոլանի ձեռքերը որպէս Արևելքը Արևմուտքին միացնող մի օղակ: Ես կուսցայ ժպտալով և այդ գեղեցիկութեան առաջ հաւատարակչութիւնս կորցնելով, թաշկինակս անզգուշութեամբ գցեցի ցած:

Նա կանգնեց մի րոպէ, և վարանած առնելով թաշկինակը տրորեց ու դրեց գրպանում:

- Միթէ դուք չէք դարձնում այդ:
- Ո՛չ:

Ես այլևս չհարցրի թէ ինչու որովհետև ինքս էլ ուզում էի այդ բանը, և գոհ ու ուրախ կատարւածից որպէս երջանկութիւնը, փոխանակեցի նրա հետ վերջին ժպիտը, ու ծածկեցի լուսամուտը:

IV.

Ժամի առաւտուայ ութն է, շուտով նրանք գնալու են նախաճաշի այդպէս է արհեստանոցներում. ես առնում եմ մի կաթնահունց

և նստում լուսամուտում, ահա նա գալիս է բոլորից առաջ և աչքը իմ լուսամուտին յառած, ես հայացքով քաշում եմ նրան ու հասկացնում որ բան ունեմ ասելու, նա կանգնում է աջ ոտը թեքած դեպի առաջ ու նայում, ես կէսիցս աւելի դուրս եմ ձգում լուսամուտից ու փոխանակ օրև է խօսքի, հարցնում:

- Դուք չէք տալու իմ թաշկինակը:
- Նա կարծես նոր է ուշքի գալիս:
- Ի՞նչ թաշկինակ:
- Այդ բոլորին ընկնում է կաթնահունցը ուղիղ նրա կրծքին:
- Մ, ան, չարածճի, իսկ ինչպէս է քո անունը:
- Իմ անունը, Լիլի:

— Այդ ինչ գեղեցիկ անուն ունես, Լիլի, շնորհակալութիւն: Նա առաւ թաշկինակը կաթնահունցը կապից նրա մէջ և ժպտալով դարձաւ արհեստանոց, իսկ իմ ականջին հնչում էր նրա դանդակի նման առողջ ձայնը որ և բաւականութիւն պատճառեց ինձ:

— Լիլի, շնորհակալութիւն...

V.

Այսօր երեկոյեան մենք դուրս եկանք բակը, և սկսեցինք պարպել մարմնամարդութեամբ. շուրջս լիքը ծառայողներ են աշխատանքը ներկայացնող բանուորների հետ, ես ի հարկէ այդ խմբի մէջ հայացքով որոնում եմ մէկին, բայց չեմ գտնում, մի փոքր ուշ՝ մօտովս անցնում է մի քնքշութիւն որ անտառների խաղաղութիւնը ունէր և նուրբ ու գեղեցիկ կանացիութեան պէս ասում իմ ականջին:

- Ահա նա:
- Մ, ան, Լուիզ այդ դ՞ու ես:

Նրա քոյրն էր: Ես հաղիւ կարողանում եմ գրկել նրան որովհետև միաժամանակ անցնում էր և նա, այն գեղեցիկ դեր, թարմացած ու սիրուն որպէս արշալոյսը. ես աչքերս մէկ նրան, մէկ քրոջը դարձրած շշկուած միայն կարողանում եմ իրր թէ հարցնել ինձ չդաւաճանելու համար:

- Ինչո՞ւ ուշացար Լուիզ:
- Ես չուշացայ, ես նրան էի շտապեցնում:
- Այդ ասաց նրա բռնը, նրա նման գեղեցիկ ու պայծառ Լուիզը:

VI.

Սէրը կրքից չպատր է անջատել, և եթէ ուզում էք որ կեանքի մէջ և գործողութիւն լինի, ապա պէտք է միաւորել երկուսին. բարձր ու իզէտական սէր ես չեմ ընդունում, երբ չկայ նրա մէջ իրար ձուլ-



ւելու և իրար ոչնչացնելու գործողութիւն. ուժերի բաղխումը կեանքը շարունակելու յոյս է ներշնչում և հէնց դորա համար անհրաժեշտ է աւերմունքը, ցանկութիւնները կիսելու որեւէ իր, որը և կապում է ախտերէի հետ հաղորդակցութիւն ունեցող հարմանիային: Եւ ահա ազու աչքերով մի կատարեալ ամբողջութիւն որ իրապէս միաւորելու մէջ է զգում իր գեղեցկութիւնը, և որին այդ քայլն անել արգելում են ժամանակակից հասարակական մի քանի պահանջներ, ու այդ ինքնազսպումը երբ այսօր ամբարում եմ իմ մէջ, զգում եմ որ դիմա- նալ չեմ կարողանում, չեմ կարողանում:

VII.

Այսօր ինձ վիճակուած է աւելի քան ուրախ լինելու, և երբ վե- րապրում եմ կատարուած գեղեցկութիւնը, զգում եմ որ ակնթարթը ամեն ինչ արժէ. սև ու մաշլ օր չկայ ինձ համար, արեւ փայլում է իմ գլխի վրա որպէս հրէդէն գունդ, իսկ ճաճանչները խաղում են ծովի ալիքների հետ որպէս նէյանդների խմբեր, մօտիկ գործարանի ժխոն է, աշխատաւորների այդ հսկայական տունը, որ ամեն մի վայր- կեան իր շողիների թանշի հետ դուրս է չարտում նրանց դժգոհու- թիւնը, երևում է և մի մանակ ծառ որ իր սաղարթների տակ պահում է զեռ մի քանի թռչուններ. ես այդ պահին առնում եմ Լուիզի թևը որ այնպէս յիշեցնում է իր առնական եղբօրը և անցնում զեպի շու- կան: Մօտիկ նրբափողոցից անցնում են բանւորներ կոնատակերին սև հացի կտորներ բռնած, Ասուած իմ ինչպէս մերկ են նրանք, կուրծքները բաց է ամբողջապէս իսկ վարտիկ նրանց հագին համարեա թէ չկայ, ես համեմատեցի առնական ախլի այդ երկու գեղեցկու- րիւնները, և տեսայ որ սիրաս դաւաճանում է իրան—չի մօտենում սրանց. այդ բոպէին Լուիզը քաշեց թևս և գլուխս բարձրացնելով իմ գէմ ու գէմ տեսայ նրան, այն բոլոր պատանիների մէջ ամենազեղե- ցիկին որ վարդի գոյն ունէր և տղամարդու խրոխտութիւն, ես շիկ- նած պարզեցի ձեռքս և նա առնելով իր ափի մէջ ասաց:

— Գու այսօր կարծես չես քնել, Լիլի:

— Չէ քնել է, և այն լաւ է քնել պատասխանեց Լուիզը—բոլոր գեղեցկութիւնները քնի մէջ են երազում:

Ես լռեցի և ձեռքս ազատելով նրա ափից, հետս տարայ մի դոդ որ այնպէս յիշեցնում է Զօպէնի դրութունը Մայրկօ կղզու վրայ:

VIII.

Ասացի որ բոլոր գործողութիւնները ինչ որ առաջանում են կրքեց, վեհ են ու գեղեցիկ, որովհետև վշրում են հերթաթայինը և

հարկադրում քեզ ապրել այն գեղեցկութեամբ ինչ որ ունես քեզ մօտ, լայն ու գեղեցիկ «գուրսը» օտար է ու անբարենի, և եթէ որեւէ գրաւչութիւն ունի իր մէջ, այդ միայն նրա համար որ մեզնից հեռու է, և ուղղակի հաղորդակցութիւն չունի մեզ հետ. և հէնց դրա համար ես այս ամբողջ օրը ապրում եմ այն հպումով, ինչ որ ունեցայ նրա հետ: Նախ յիշում եմ ձեռքիս պարզումը որ ինքն իրան արգէն ձգում էր, յետոյ նրա ափի մէջ առնելը, և վերջը մատներս միջոցով այն էլեքտրական ցնցումները որ ստացայ նրանից—այդ բոլորը գեղեցիկ էր ու ազգու որովհետև իմ հասակն էր որ բաւականութիւն էր որո- նում իր նման մի ուրիշ հասակի մէջ, կնշանակէ ես արգէն գտնուում եմ այն շէմքում որից յետոյ գործողութիւնն է արգէն—բարձր ու գեղեցիկ մայրութիւնը:

IX.

Երեկանից նրանցից բաժանելուց յետոյ մենակ նստել եմ իմ նւիրական դարձած լուսամտում ու մտածում, և ինչ էլ որ մտա- ծում եմ դուրս է գալիս լաւ ու գեղեցիկ, կարծես վատ ոչինչ չկայ ինձ համար. բոլոր ճանապարհները տանում են զեպի երջանկութիւն, և բոլոր յոյսերը խաղողի սխիտի նման զարգարում են գալ օրւայ ճակատը ինձ գրաւելու համար. զգում եմ որ մահս մօտ է բայց չեմ մեռնում այնքան կուրծքս ուռել է երջանկութիւնից, ուրախութիւնից երազում եմ իմ համբոյրը նրա շրթին, գէմքի միանալը գլխիս հետ, և յետոյ մի մեծ ու գեղեցիկ գաղտնիք որ յանձնած է գալ օրերին իմանալու, կուրծքս բռնած անց ու դարձ եմ անում սենեակում մինչև որ լսում եմ դռան դարկի ձայնը և քիչ յետոյ պայծառ Լուիզի գլուխը:

— Լիլի, ինչ կը տաս որ քեզ մի լաւ բան ասեմ.

— Ի՞նչ բան, հարցրի ես մտքերիս մէջ շփոթուած.

— Ասիան եկել է և ուզում է քեզ հետ առանձին տեսնել.

Ասիան, ինչո՞ւ չէ, ես համարեա ցատկում եմ իմ տեղից իմ արածի ամբողջ գիտակցութեամբ և զրկում ներեկին:

Նա շիկնած որպէս պարտէզների վարդը առնում է իմ ձեռքը, և մի տեսակ անվստահութեամբ որ յիշեցնում է Ասուածների քնն- քշանքը ասում ինձ:

— Այդ ինչքան ուրախ ես այսօր Լիլի:

Ես փոխանակ պատասխանելու նայում եմ զոտների մէջ կանգնած Լուիզին, որ գլխով ցտեսութիւն է ասում ու հեռանում եղիկի պէս:

— Այդ ինչո՞ւ այդպէս, հարցնում եմ նրան.

— Վնաս չունի, նստնը, երևի նա նորից կը գայ:

Այդ ասում է Ասիան, ինձ հասակակից ու նոյնքան սիրուն Ասիան:



X.

Այն, ինչ որ պիտի գրեմ, պիտի գրեմ սառը, համարեա թէ արցունքով. հատուածիս այս գլուխը զոհ է պահանջում և յոյսերս ծաղիկների պէս պիտի թափեմ նրա ոտների տակ սիրտս գերեզման դարձնելու համար, և ահա խորհրդաւոր ընկերուհուս առնում եմ ինձ հետ և նստում լուսամուտի մօտ, սիրտս անհանգիստ է ի հարկէ, բայց ես այդ բացաղբում եմ երջանկութիւնը այդքան մօտ ապրելուն համար. և մտքերս միշտ նրա հետ լսում եմ մի պատմութիւն երագուն՝ քան աստղերը, և մեզմ՝ քան աշնան օրերի լոյսը, և որի վերջում Ասիան ինքն էլ պահանջում է որ ես թողնեմ նրան, որ զաղաբեմ նրա մասին մտածելուց և վերջապէս զրկեմ ինձ այն գլուխը իմ կրծքի վրա գէթ մի անգամ տեսնելու հաճոյքից: Այդ բոլոր ժամանակ ես լսում եմ նրան որպէս ծաղիկներին շրջապատող յոյսը որ անհամբեր սպասում են թէ ահա կը գայ արշալոյսը, ու մերթ քնքոյշ, մերթ յուզուած նայում նրա բերանին մի այնպիսի վշտով որ միայն բոյսերը կարող են ապրած լինել: Ասիան քնքշաբար յուսադրում է ինձ որ դեռ սպասեմ, որ իմ գարունը դեռ չէ հասել, բայց այդ չէ օգնում. սիրտս կամաց-կամաց մթնում է սարի պէս և արցունքներս որպէս մարգարիտներ սկսում են հօսել հեղեղի նման. մի փոքր ուշ, երբ արցունքից սիրտս հանգստացել էր և Ասիան խնամքոտ քրոջ նման գլուխս էր փայփայում միայն, ես զարձայ ու հարցրի նրան:

— Ինչու պիտի թողնեմ, Ասիա:

— Որովհետեւ ես եմ սիրում:

Յետեանքը պարզ էր, սեփականացրած իրենն այլևս չեն մօտենում ես պէտք է զիջէի նրան:

XI.

Այսօր երբ մտածմունքից գլուխս ուռած, ամբողջ գիշեր ամառը-ւելուց յետոյ վեր կացայ անկողնուց, մի թուղթ վերցրի և գրեցի Ասիային—թէ արգեստ չէր կարելի որ երկուսս էլ միասին սիրէինք նրան, ես շատ յիմարութիւններ եմ արել, բայց այս յիմարութիւնը որքան էլ ծիծաղելի լինէր այնուամենայնիւ սիրուն էր թուում ինձ. անբնական տիեզերքում ոչինչ չկայ, թող մի փոքր էլ օտարոտի լինէր մեր արածը—ոչինչ, բայց որ գլխաւորն է՝ մենք երկուսս էլ կարող էինք տիրանալ այն էակին որին դատ-գատ ճանապարհներով ձգտել ենք ու պաշտել: Հին, աւանդական սովորութիւնը օտանահարելու համար հարկաւոր էր մի կամք, և դա առաջ էր եկել իմ մէջ նրա սիրուց, գեղեցիկ առարկային տիրելու համար ես մինչև անգամ զիմել

էի և մի ազեղ միջոցի—չողորթութիւն. և ահա նամակը վերջացնում եմ այսպիսի տողերով որ իբր թէ մենք երկուսս էլ կապրենք այն ըմբոստ Գէմօնի պէս, որին անիծեց բարութիւնը, և որը այնուամենայնիւ ապրեց տիեզերքում:

XII.

Նամակը ուղարկելուց յետոյ ես նստեցի լուսամուտի առաջ և գրեցի լոյսը. տարօրինակ ոչինչ չկար. անհանգիստ դրութեամբ ես մինչև անգամ չնկատեցի թէ ինչպէս նրանք գնացին նախաճաշի ու դարձան, իր ծարաւը յագեցրած մի ձայն բողբոսում էր իմ մէջ և ես այժմ միայն հասկանում էի դժգոհներին: Նրան չէի սպասում, ամբողջ մտածմունքս Ասիայի հետ էր թէ ինչպէս կբաժանի նա իմ մտքերը, և երբ շտապունած դուրսն եմ նայում խոհերիս հետ, յանկարծ լսում եմ մի քնքոյշ ու թաւշէ ձայն որ այնպէս յիշեցնում է աստղերի երգը ծաղիկների հետ:

— Լիլի, այդ սում ես սպասում այդպէս յուզուած ու կըքոտ:

— Քեզ...

Պատասխանեցի ես այնքան բարձր, որ նա կարմրած փողոցի անկիւնները նայեց իմանալու համար թէ որեւէ մէկը չը լսեց այդ խօսակցութիւնը:

Մի փոքր զգոյշ Լիլի, ասաց նա—այդպէս վտանգաւոր է մեզ խօսել:

— Բայց ինչու թագցնել, երբ հէնց այս բոպէիս ես ուզում եմ իմանալ թէ դու մեզից որքին ես ընտրում քեզ ընկեր, ինձ, թէ Ասիային:

Նա լսեց, և շտապունած աչքերը յանցաւորի պէս թաքցնելով վրաս, թողեց ու հեռացաւ:

XIII.

Տղամարդուն նեղը գցելու համար պէտք է նրան առաջարկել ընտրութիւն անել կանանց մէջ, և ահա նա կսկսի իր հազար ու մի տեսակ յիմարութիւնները և վերջն էլ այնպիսի մէկին կընտրի, որին տեսակէս որ չէ սիրում: Ընտրողը զրութիւնը նկատեցի նրա մէջ երբ առաջարկեցի իմ, և Ասիայի ընտրութիւնը: Իսկապէս նրա խօսքը կարող էր կշիռ ունենալ մեր մէջ և թէ անկեղծօրէն մօտենար մէկն ու մէկին և միւսին սառնութիւն ցոյց տար, բայց նա այդ չարեց և թողեց որ հանգոյցը ինքն իրան լուծւի սրով և սխալեց: Վրդովւած կերպով մտածում եմ այդ բոլորը և զբօսնում սենեակում, պատերը



լուռ են, իսկ գրքերը սշինչ չեն ասում այդ մասին. մտանում եմ սեղանին, տէր Աստած այս ինչ դող է որ այնպէս պատել է մարմինս, մխիթարելու համար մի մարդ էլ չը կայ որ բաց անի դուռս, դուրսն եմ նայում, մէկը վազում է փողոցով որպէս լեռների սահանքներից ցած ընկած առու որ ընտրեալն հարստիւնումն է բերում իր հետ, և որի տեսքը այնպէս սփոփում է իմ սիրտը. ես գուռը բաց արի և երբ բոլորովին ինձ մօտ էր փակեցի լուսամուտը ասելով:

— Ես ուղում եմ այնպէս համբուրել քեզ, որ երկինքն անգամ չընկատի այդ:

Նա ծիծաղեց այնքան պարզ ու երաժշտօրէն, որ ես նրան կարծեցի, նրան, որ իր մէջ այնքան վարպետօրէն թագցնել գիտէր Լուիզը:

XIV.

Գուռը կողպելուց յետոյ ես ծածկեցի լուսամուտը և նստեցի Լուիզի մօտ. նրա այտերը շիկնել են որպէս արեւելքի վարդը, իսկ շրթերը որպէս ամբողջից նոր կիսած մի նուռ, պարանոցի վրայից արձակ հիւսերը որպէս ջրվէժ իջնում են մինչև ստերը, իսկ սև աչերի միջից մի կրակ անընդհատ քաշում է ինձ չգիտեմ այրելու, թէ միայն գուրգուրալու համար. քիթը կանոնաւոր է եղբօր պէս, իսկ ճակատը այնքան պարզ, որ ես հարկ համարեցի Աստածաների հրապարակ կոչել այն, երկար ու գեղեցիկ թարթիչները անընդհատ շարժում են, և ինձ յիշեցնում մի երգ որ դեռ գերեզմանիս վրայ պիտի երգեն դալ օրերի լոյսերը. ես կամացուկ թեքում եմ արցունքը աչքերիս և համբուրում նրա խոհերով հարուստ գլուխը որ այնպէս մեղսոտ է, նա այժեամի պէս խրտնած ցատկում է նստած տեղից ու բարձր կրկշարով որպէս մի կայծակնահաստ աղբիւր, հարցնում:

- Ինչո՞ւ ես արտասուում Լիլի:
- Որովհետև շատ եմ սիրում:
- Ո՞ւմ:
- Միևնոյն է քեզ, թէ նրան:
- Ա՛, ա՛, ասա նրան Լիլի, ես այդպէս էլ կը հասկացնեմ:
- Իսկ ի՞նչ է մտածում Ասիան, հարցնում եմ ես:
- Ասիան, յարեց նա մի փոքր մտածկոտ—Ասիան էլ նոյնն է մտածում ինչ որ դու:

— Եւ այդ բոլորի պատճառը որ քո եղբայրն է, լուռ է որպէ մի սփինքս, այնպէս չէ Լուիզ:

— Այո՛, այնպէս է, պատասխանեց նա և գեղեցիկ գլուխը թաղեց իմ գրկի մէջ հեկեկալով:

Ես երեսու դրեցի նրա երեսի վրայ, և սկսեցի ապրել մի կեանք որ Հնդկական նիւրանան է յիշեցնում, և որը մօտեցնում էր ինձ մի էակի որին շատ էի սիրում, և որին կուզէի ձուլած լինել. նա դգաց, որ ես իր մէջ սրտնում եմ իր եղբօրը, և սկսեց փոխադարձաբար համբուրել ինձ յաճախ կատակելով:

- Գու շատ գեղեցիկ ես Լիլի:
- Գու էլ շատ բարի ես Լուիզ:

XV.

Իմ բոլոր նկարագրութիւնների մէջ ես ապրում եմ այն գեղեցկութիւնը, որը փայլ է տալիս տիեզերքին, և սահում արձակ դաշտերի վրայով որպէս երաժշտութիւն. բուռն փոթորիկներ չկան իմ հոգում և դուք կարծում էք որ ես հաշտել եմ եղածի հետ, բայց այն ներքնապարտմները որ կապ ունեն հոգեկանիս հետ վեր են ամեն բանից: Բոլոր քնքշութիւնները—եւ ապրում եմ միայնութեան մէջ, և անշուք խաղաղութեան այն արմաւենու պէս որի կատարը հոգմերն են լիզում անընդհատ, շուրջս մի թովիչ շառաշիւն եմ լսում որը ես վերագրում եմ խնթութիւնը ինձ պէս ապրողներին և յետոյ նպատակին չհասած ցանկութիւնը որ այնպէս փոխում է դժգոհութեան—բոլոր բաղխումները իմաստ ունեն երբ իրական են, իսկ երբ այդ չէայ ամեն ինչ բացառում ես մի գեղեցիկ յիմարութեամբ: Բայց ես այդ բոլորը զգալուց յետոյ դարձեալ ոյժ էի տալիս հոգեկանիս նրա հոգեկանի հետ միանալու համար, իրականութիւնը ձուլելու այնպիսի մի գեղեցկութեամբ որ տեսական լինի ամեն բանից, և որի վայելքը իսկապէս որ բաւականութիւն պատճառի ինձ. մասամբ այդ ինձ յաջողում է, և ես կուրծքս սուսած մտքով տարում էի այդ ապրումների հետ մինչև որ ականջիս մօտ լսում էի ինձ ծանօթ կէս իրական, կէս եթերային ձայնը:

- Լիլի, այդ ո՞ւմ ես երազում այդպէս մենակ ու մօլոր.
- Նրան, պատասխանում էի ես այնքան կրքոտ որ խոհերս ցնդում էին գարնանային ամպերի պէս:

XVI.

Այսօր երեկոյեան զբօսանքից վերադարձայ և կարդացի Ասիայի պատասխանը, նա երկուսիս գեպի մէկին ձգտելը անյարմար է համարում, և իր կողմից աւելացնում է որ երկուսս էլ հաւասարապէս թողնենք նրան հեռուից սիրելու համար. իրականը վայելելու համար



մենք անպատրաստ դանուեցանք և դորա համար որոշեցինք վայելել նոյն սէրը որպէս հեռաւոր մի քնքշութիւն որ այնպէս յիշեցնում է ծաղիկներէ բուրմունքը. վայրի հեղեղները ակօսեցին մեր սիրտը որպէս մի քրօնդէ ժայռ, և նա այլևս տրամադիր չէ նոր խնկթութիւններէ քան մի սիրուն ու թովիչ խաղաղութեան որ այնպէս առաջնորդում է դեպի նոր երեկաներ: Կիրքը մարաւ մեր երակներում որպէս կայծակի փայլ, և հասակը որ ներկայացուցիչն էր այդ բոլորի, թառամեց նոյն արևի տակ որ այնպէս բորբոքել էր մեր կրակը, սիրտս բռնած լսում եմ զանգակների իրիկայ զօղանջը սիմֆօլիք ու սիրուն որպէս մի ազօթը երբ դեռ աստղածածկ երկնքից շէի իջել այս աշխարհի վրայ, աչքերիցս վաղում են արցունքի հեղեղներ և համոզում որ մենք բոլորս մի մի «գեղեցիկ յիմարութիւններ» ենք նման այն մանկանց, որ իրանց խաղերով զարդարում են տիեզերքը. կիրքն ու սէրը երկու համազօր գործակիցներ են որ այսպիսի հիասթափումներով ծանրարեւունում են մեր սիրտը, բայց և որոնք ծնունդ են տանում իրարուց, ուրեմն այն պայքարը որ տեղի ունի այդ երկուսի մէջ, սիրելի են հաւասարապէս սրովհետև ցուցադրում են մի «գեղեցիկ խնկթութիւն» որ այնպէս զարդարում է տիրոջ ստեղծագործութիւնը... Բոլոր արտայայտութիւնները բնական են սրովհետև կեանքից են առաջանում, իսկ բոլոր կատարւածները վեհ են ու չնաշխարհիկ երբ ցուցանում են հարմօնիումը մի անյայտ ամբողջի որ մաս-մաս ապրում է մեր մէջ: Նամակը ձեռքիս մէջ լսում եմ մի ուժեղ սօսարանօ որ իր արտայայտութեան մէջ վշտի մի մաքուր շեշտ սւնի, և ես մտածում եմ որ նա էլ իր տեսակի մի ծաղիկ է մեր պարտիզի համար, երբ դուռս կամացուկ բացւում է:

- Լիլի, կարելի է մտնել:
- Խնդրեմ, պատասխանում եմ առանց յետ նայելու:
- Լուիզն էր:

XVII.

Նա մտաւ, և երբ դէմ առ դէմ մի փոքր նայեցի նրան կիրքը բռնիւհեց իմ հոգում. նրա աչքերը սևորակ էին ու սիրուն որպէս նրանը, և դէմքը մի արև որ այնպէս վառւում է բոլոր արշալոյսներին: Նախանձը, որ սլտի տիրելի մի այնպիսի կատարելութեան որը կազմում է սրա մասնիկը նորից խօսեց իմ մէջ, և ես համեմատեցի իրականը երևակայականի հետ, շօշափելին գեղեցիկ հեռաւորութեան հետ որ կարծես ցնորք է, և ուժգին ոտախնով նետուցի դեպի նա ջղայնացած:

- Լիլի, ի՞նչ ես ուզում:
- Սեփականութիւն, որ նրան ինձնից բացի էլ ոչ ոք չմօտենայ:

1001  
3556

Այդ պատասխանեցի ես, երբ Լուիզը վախկոտ ու բարի երեխայի նման նայում էր աչքերիս. և խկապէս, հոգիներէ այն հաւաքական համայնացումով որ մենք ցանկացանք սիրել նրան ինձ չը բաւականացրեց, իրական կոպտութիւնը աւելի լաւ համարեցի քան հեռաւոր քնքշութիւնը և ես որոշեցի տանել ամեն մի աւերմունք որքան էլ սարսափելի լինի նա. և ահա, առնում եմ Լուիզի սիրուն գլուխը որ իր եղբոր գլուխն է յիշեցնում, ու կայցնում սրտիս համբուրելով ու աւերելով նրան:

- Լիլի, այդ ի՞նչ է պատահել քեզ այսօր, մատաղ քնքշութեամբ հարցնում է Լուիզը:
- Ոչինչ, եթէ միայն իմ հասակը չէ ասում այդ բոլորը.
- Նա նայում է աչքերիս, նայում, ու մի կերպ գլուխը աղատելով փախչում դեպի դուռը արտասանելով:
- Խնդճ Լիլի:
- Այն, Լուիզն էլ հասկանում էր ինձ:
- Խնդճ Լուիզ:

XVIII.



Այսօր կողմնակի կերպով ինձ ասացին, որ նա այնքան էլ չէ հետաքրքրւում ինձնով, ուրեմն իմ կողմից ինչ որ ուզում եմ նրան մնում է անպատասխան. որքան էլ արբած լինեմ նրա սիրով, այնուամենայնիւ զգում եմ, որ դա վիրաւորական է ինձ համար և այն շատ վիրաւորական. ես իսկոյն նստում եմ լուսամուտի առաջ և սպասում, միաժամանակ գրելով միևնոյն բանը Առիային. դեռ երկու տող չգրած ներքեից լսում եմ ծանօթ հաղի ձայն որ առաջին խաղերում նման էր ուժեղ բասի, իսկ վերջերում մի քնքոյշ ու թովիչ կանչի որ կարելի կլինէր ջութակի վրայ նուագել: Թաւ և ուժեղ առնականութիւնը զգացի ինձ մօտ, ու իսկոյն և եթ լցեցի հպարտութեամբ երկուսիս իբր ամբողջ ընդունելով, և նրան ձգելով առաջին խօսքը:

- Լիլի, ինչո՞ւ ես թաղուել այսօր:
- Ես իբր թէ չեմ լսում, յուզուած առնում եմ ընկած մատիտը և սկսում խաղմղել Առիայի նամակը. նա կամացուկ առնում է փողոցից մի փոքր խիճ, փաթաթում թաշկինակի մէջ և զցում դեպի ինձ:
- Ես միայն թաշկինակի ապակուս հետ շփման ձայնն եմ լսում:
- Զը՛խկ...
- Եւ ահա այդ ձայնից ես սպրեցի գեղարեւոտական աշխարհի այն բոլոր երաժշտութիւնը, ինչ որ չէր արտայայտել Լիտտը, կամ Բէթհօվէնը իր փոթորկոտ հոգու հետ:



XIX.

Գիշեր է. մի ժամ առաջ ես համեմատեցի մեզ երեքիս բոլոր ուրիշների հետ, և տեսայ որ մենք երեք գեղեցիկ հոգիներ ենք որ ձգտեցինք մի գեղեցիկ մարմնի, բայց և որին չկարողացանք տիրել. վիշաբ խօսեց մեր սրտերում և մենք մեր դժգոհութիւնը յայտնեցինք քնքշութեամբ որին հաղի կարող են հասկանալ միմիայն ճիշտակները, ու մենք միևնոյն հոգուց երեք առանձին մասնիկներ, կենտրոնանում ենք մի տեղ ցաւը հաւասարապէս բաժանելու համար:

Դու, Լուիզ, նայիր իմ աչքերին և ասա որ եղբայրդ այլևս նոյն հասակը չունի և այնպէս գեղեցիկ չէ ինչպէս դու, իսկ դու Ասիա, վեր առ ջութակը և նուագիր նրա վրայ մի թովիչ ու քնքոյշ խոհ, երգ, որ յիշեցնելիս լինէր լոյսերի հետ մեղմիկ հանդիպող աշնան երեկոն. քո մաղերը աւելի հարուստ են քան աստղածածկ երկնքը այս գիշերային վարսերը, և ուրեմն քեզ է վիճակւած նուագել սրտուրբիւնք այնքան լսող, որին լսելու դան արևի հետ անհետ կորած դժգոհ հոգիները. նա, որի մասին երեքս էլ մտածեցինք, ձուլեց հասարակութեան հետ և շուրջ մեզ հետ առանձնութիւն կազմել, ուրեմն կիրքը որ արտայայտուում էր մեր մէջ այնքան վեհ ու գեղեցիկ, պէտք է դոհներ այն մեծ ու հասարակ Ամբողջին, որից առաջացել է մեր գեղեցիկ հոգիներին գեղեցիկ առարկան: Զարմանալի բան, դեռ երէկ մէկը ինձ մեղադրում էր, որ ես զլացել եմ այն Դէմօնի անունը անգամ տալուց, որը ինձ այսքան երկար պատմութեան առիթ տուեց. բայց ինչ դուրս կը գայ դրանից, դուք գիտէք իմ անունը, ճանաչում էք մեր հոգին, և մինչև անգամ ժպտալով արտաստնում էք այն յաճախ—Լիլի, Լուիզ, Ասիա... Մենք այս երեքս մի սիրուն շարք ենք ծաղիկները մի նոր տիեզերքի, ուր ցաւը խօսում է անադմուկ, և կիրքը գործադրում իբրև ստեղծագործութիւն միայն, և մենք երեքս էլ ծանօթ ենք հասարակութեան մեր քնքոյշ ու գեղեցիկ դժգոհութեամբ, որ այնքան վտանգաւոր է մատաղ հոգիների համար. իսկ նա, այն առնականութիւնը որի անունը միայն իբրև գաղանիք մնում է ինձ սեփականութիւն, ձեզ պէս մի մարդ է ձուլւած հոգիներից որի մէջ ծիածանն անգամ տեղ է զբաւել մեզ յուսադրելու համար:

XX.

Այսօր առաւոտեան քնից դարթնում եմ և վաղում գեպի պահարան, լուսամուտս կողպ է բայց և թարմ օդի մասին էլ չեմ մտածում երբ ամբողջ տիեզերքն է այսչափ վարակւած, միայն կամացուկ առ-

նում եմ յիշատակարանս և սկսում աչքի անցկացնել վերջացնելու նպատակով. բայց վախենում եմ այս վերջին գլխում արտասանել նրա անունը և գորանով խոստմանս ոյժը թուլացնել: Գործի համար չեմ մտածում, և միթէ այս գործ չէ երբ ձեզ հետ միասին միևնոյն վայրկեաններում ես անադմուկ տանջում եմ, յուզում ու արտասուում. ոչ որ չըկայ, ինքս եմ միայն և իմ Ասուածը, ու ես մենակ եմ իմ մաքերի հետ այնպէս, ինչպէս ազօթքը թոյլի հետ անապատում: Քրքրում եմ յիշատակարանս, մտքերս ժպտալէնաձև առուի նման անցնում են առջովս որպէս ջրային փրփուր, նրա անունը լեզուիս ծայրին է բայց չեմ արտասանում, ահ, և ինչքան ուզում եմ հեռու լինել նրանից, բայց և որը անընդհատ մօտենում է ինձ. սենեակում նստել անհնարին է, պէտք է դուրս գնալ այս որջից թարմանալու նպատակով, բայց հաս Ասիան է գեպի ինձ գալիս:

Չափած ու ձևած մի այնպիսի կշռով որը անհրաժեշտ է Քիմիկոսին դրամները հաշուելու համար, ես որպէս մի տարիքաւոր կին մօտենում եմ նրան. նա սկզբից ոչինչ չէ ասում, նայում է աչքերիս, և ձեռքս ափի մէջ նստելուց յետոյ միայն խօսում:

- Դու շատ լաւն ես Լիլի:
- Ինչո՞ւ:
- Որովհետև այդ դրութեամբ աւելի գեղեցիկ ես դարձնում վիշաբ:
- Ես ոչինչ չպատասխանեցի, և աւելի լաւ է ասել ոչինչ էլ չհասկացայ նրա ասածից, մինչև որ նա քրոջ նման երկար նայելով վրաս պարզեց ինձ ժպտալէնի մէջ փաթաթած մի կապոց:
- Ի՞նչ է դա:
- Մի յիշատակ, որը նա ուզում է ինձ և քեզ մօտ ունենալ:
- Ես գուցէ առանձին ժամանակ ուրախութեամբ ընդունէի այն և կրծքիս մէջ էլ պահէի իբրև նրանից ուղարկւած, բայց Ասիայի ներկայութեամբ մերժեցի ասելով:
- Ես ուզում եմ ինձ ազատ թողնել որևէ պատասխանատուութիւնից:
- Այսինքն:
- Ինչո՞ւ նոր ընտրութիւն չանել հէնց նրա ընկերների մէջ:
- Նրա պակասը ոչ-որ չէ կարող լրացնել, Լիլի,—ասաց նա խղճալի հայացքով նայեց վրաս, ու գնաց:

Ես դարձեալ մնացի իմ մտքերի հետ միայնակ—այո՛, նոր ընտրութիւն անել նրա նմանների մէջ, գուցէ թէ նրա պէս մէկը նորից պատահի: Այդ ասացի ես դիտմամբ, իբր թէ հասկացնելու համար որ



ես այնքան էլ չեմ մտածում նրա մասին, բայց հէնց այդտեղ էլ իմ կեանքում ես առաջին անգամ իմ սրտի դէմ կեղծեցի, և այն վառ կեղծեցի:

XXI.

Երեքս էլ միատեղ ենք այդ լու է, և երեքս էլ 16 ամեայ միամիտ գառնուկների պէս աղօթում ենք նրա համար, ոչ որ չէ խօսում, միայն Լուիզը պատմեց նրա կեանքից մի դրագ առանց անուճը յիշելու ու լռեց: Ապում է մի ձայն թովիչ խաղաղութան պէս, որ այնպէս զբաւում է մեր հոգիները որպէս մշուշը նորաբաց ծաղիկների սիրտը աօթ եղանակին.— դա իրեկայ զանգի ձայնն է որ գալիս է հեռաւոր գաշտերի վրայից բանականութեանը կեանքի կոչելու համար: Ձայնը լռեց, Լուիզին ենք նայում, այժմ մեր սրտերն են աւելի շուտ խօսում քան թէ մենք, բայց հէնց այդ բոլորին լուսամուտից ընկնում է մի բան և երեքս էլ իրար գցում, մօտ ենք գնում, իմ թաշկինակն է որի մէջ թղթի մի փոքրիկ կտորի վրայ գեղեցիկ գրերով գրած է «յարգանքներս գեղեցիկ ազանիններին» վերցնում եմ,— միս դու չարածնի...»:

Մթին ծառուղում երեք հասակակից քոյրեր, որ իրանց ասելով և երեք գեղեցիկ հոգիներ են ներկայացնում, մօտեցան ինձ, և նրանցից երկուսը փոխ առ փոխ պատմեցին այս պատմութիւնը, այնքան պարզ ու երաժշտօրէն, որ ես կարծես քնի մէջ լսեցի կամ լուսնի վրայ նստած, աստղերի երգը ունկնդրելիս. և նրանց շունչը տաք էր որպէս համբոյրը նորապսակ զոյգի առաջին գիշերայ, ու թովքը բացաղրում մի կեանք, որ այնպէս տալի է ամբողջ պատենութիւնը բոլոր արեւների տակ: Ու երբ վերջացրին նրանք, ես հերթով նայեցի նրանց աչքերին, սևօրակ ու կրքոտ որ կարող էին բռնկել ամբողջ տիեզերքը, և հերթով նայեցի նրանց շրթերին, որ սիրոյ տեղ աշխատում էին միայն աղօթք մըմնջալ, ու յետոյ նայեցի և նրանց այտերին, որ այնքան նուրբ էին ու գրաւիչ որպէս կանացիութիւնը մեզի գիշերներին, ու ես զարձայ դեպի երրորդը, որ այնպէս լուռ էր, և որ երկար նայում էր իմ աչքերի մէջ:

Եւ ես ասացի նրան, այդ երրորդին:

— Մենք կարծեմ անծանօթներ էլ մնացինք, այնպէս չէ:

— Ո՛չ, ցաւալին էլ հէնց այն է, որ մենք շատ վաղուցայ ծանօթներ ենք, ասաց նա ժպտալով:


— Ի՞նչպէս, նայեցի ես հարցական:

— Այնպէս, յարեց նա, և եթէ կուզէք, հարցրէք ընկերուհիներիս և նրանք ձեզ կասեն:

Այդ բոլորին լսեցի ծանօթ ու քնքուշ ձայնը հեռացող աղջիկների:

— Լիլի, գնանք, արդէն ուշ է:

— Ա՛, ա՛, Լիլի, խօսեցի ես ջղայնացած ուրեմն այժմ ցտեսութիւն...:





## ԽՈՂԱՐԱՐՈՒՅՈՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

I.

— Ես միշտ մի առանձին հաճույքով էի բանում դուռը, երբ նա սանդուխներից բարձրանալով ծեծում էր նախ լուսամուտը և ապա դռան ապակին: Երկրորդ զարկից յետոյ ես արդէն ճանաչում էի նրան և չփոթւած սկսում շտկել մագերս, գոգնոցս, կուրծքս և յետոյ յուզւած՝ բաց էի անում դուռը: Մի այդպիսի արարմունք անսխալման անսխալութիւնն պիտի առաջացնէր, և ահա մի օր տիկինը նկատեց այդ ու բարկացաւ. նա ուզում էր, որ ես նրա առաջ միշտ էլ գըզ-գըզած ու կեղտոտ դուրս գամ. այդ բանին ես ընդդիմանում էի, բայց և չէի էլ կարող չլսել: Նոյն օրը չորրորդ անգամ երբ լսեցի դռան զարկի ձայնը, կուրծքս բռնած մօտ վագեցի և դուռը բանալով՝ լսեցի ինձ դիւթող կէս-իրական, կէս եթերային ձայնը.

— Պարոնը տանն է:

Եւ ես մաքուր ու անարատ, որպէս քնարերգութիւնը, շիկնած պատասխանեցի.

— Ո՛չ...

Այդ րոպէին աչքերս փայլում էին, և նա նկատում էր պարզ, որպէս աստղերը, թէ ինչպէս կիրքը վառում է այնտեղ հասունացած սրտի նման, երբ արդէն չի կարողանում պարակել:

Եւ նա ճիշտ աչքերիս նայելով դռան միջից խօսում էր, երազուն որպէս աղբիւրը. ու սև բեղերի տակից բարակ շրթունքները հպում էին ու բացում այնպէս, որ ես կարծում էի թէ ինձ են համբուրում շարածճիները, որի համար էլ աշխատում էի թագցնել դէմքս, որ տիկինը չնկատի իմ յետեից.

Ու նա կրկնում էր:

— Ուրեմն պարոնը տանը չէ:

Իսկ նա այդ ասում էր յաճախ, երբ երկուսս էլ կորցնում էինք իրար, և սև բեղերի հետ որ տղամարդու առնականութիւնն է յիշեցնում, կրծում էր շրթունքները, այն նուրբ ու գեղեցիկ շրթունքները:



Ու ես պատասխանում էի:

— Տանը չէ...

Այդ ըստ էին ինձ թւում էր, որ ես երաժշտութիւն եմ լսում դաշտով, և նւագողը նա է, որ ջութակը վարպետօրէն պատրաստել է իմ կրծքից, և որի լարերը սակեղոյն վարսերիս միջոցով միացրած են սրտիս հետ:

Եւ ահա ուսիս վրայով մի ձայն եմ լսում, նոյնքան ատելի, որքան ես, և նոյնքան ցած, որքան կանացիութիւնը:

— Ա՛, այդ դճւք էր պ. X, մտէք խնդրում եմ...

Տիկինն էր:

Ա՛հ, այդ տիկինը... մի մարդ ունի, ոչ այնքան էլ տգեղ, չի բաւականանում դրանով, ծանօթների ահագին շրջան է կազմել, որի մէջ գերազանցում են դարձեալ տղամարդիկ, չի կշտանում նոյնպէս, և ահա ինձնից խլում է այս մէկին, որը՝ թւում է ինձ համար է գալիս այստեղ և որին կորցնելով ինձ եմ կորցնում ամբողջապէս, ես, որ կեանքը դեռ նոր եմ ճաշակում, և կրծքիս տակ վառւած է մի ամբողջ արեգակ, պէտք է անդի տամ նրան, որովհետև անյարմար է մի խոհարարուհու միևնոյն խնդրում մրցման մէջ մտնել իր տիկնոջ հետ. և ընտրութեան ըստ էին երբ բոլոր կանանց համար փայլում է գեղեցիկ մայրութիւնը, ես պիտի կապւեմ ստրկութեան հետ, պաշտօնիս, և մի կտոր հացի համար:

II.

Նրանք գնացին ընդունարան, և մի առժամանակ նախանձրց դրդւած ես չը գնացի նրանց կողմը: Մէկ-մէկ արծաթահնչիւն ծիծաղ էի լսում, որը արձակում էր տիկինը նրան շլացնելու համար, և յետոյ մանկանոցից փոքրիկ Պետրոսի լացը, որ այնքան խանգարում էր ինձ: Հաստ, գերուկ տիկինը վատ չէր, իսկ եթէ այսպէս է խօսում միևնոյն սեռին պատկանող մէկը, ապա գեղեցիկութիւնը կասկածից վեր էր. ուրեմն ի՛նչ անել, մտածում էի ես. կեանքի մէջ անկախութիւնը մի անգամ է ձեռք բերում, և այն տարիների ընթացքում լաւ ուսումնասիրելուց յետոյ. պէտք է սեփականացնել իրը օտարներից հեռու պահելու համար,—արժէ վաղա՛յ կեանքը դոհել այսօրուայ հացին...

Մտքերս ընդհատեցին երկու կողմից արձակած քրքիջը, որ այնպէս նման էր ժայռից ընկնող ջրվէժին, և յետոյ մի ձգտեց, որ ես համբոյր կարծեցի, և որի համար էլ ատելութեամբ լցեցի դէպի նրանց:

— Օ՛, եթէ այդ նա լինի, մտածեցի ես:

Տիկնոջ կողմից արածը ինձ համար ոչինչ էր, ես կին եմ, և գիտեմ թէ ինչ է անում մի կին իր սիրած տղամարդուն տիրելու համար, և այդ դէպքում ես նրան ազատ էի թողելու գոնէ այնքան, որ այդ ծածկի տակ ինչ ուզում է անի. բայց դրա հակառակ սիրաբանութեան մէջ եթէ միայն այդ կար, որոնում էի ժլատութիւն իմ սիրած տղամարդու մօտ, որ նրա մի համբոյրն անգամ չի կարելի վատնել առանց ինձ, և որ նա ծնւած է ինձ համար, այս ինձ համար. ու բարկացած որ նա այդքան անփութօրէն է վարում իր, այսինքն իմ առարկայի հետ, մի քանի անգամ ուղեցի ներս գնալ պատասխանելով միաժամանակ և իմ ներքին ձայնին, որ մէկ-մէկ հարցնում էր խռովքիս մէջ:

— Ինչի՞ համար:

— Սեփականացնելու, իմը դարձնելու համար, վերջացնում էի ես բարձր, համարեա թէ լսելի ձայնով:

III.

Ժամի երկուսին երբ նա արդէն գնում էր, ես դուրս ելայ ճանապարհելու, թէպէտ գիտէի, որ նա էլ միևնոյն բակումն է ապրում, որտեղ մենք, և որ պարոնս հինգից էլ շուտ չպիտի վերադառնայ, ինչպէս դիտէր և նա: Սովորական հարցուփորձը օրեկան մի քանի անգամ անդի էր ունենում միայն նրա համար, որ երիտասարդ սրտերը անդուսպ կերպով ձգտում էին իրար, և որ այդ հասակում նրանք գործում էին աւելի արագ, քան ընդունւած էր կարծել հասարակութեան մէջ. և այդ այդպէս կարծում էի միմայն ես, և ենթադրում որ նա միայն ինձ համար է գալիս այս տունը, և որին մօտենալու ոչ-ոք իրաւունք չունի, բացի ինձնից որովհետև մենք ենք իրար կարիք գգում, և այնպէս ձգտում ենք լրացնել իրար, այն, լրացնել իրար:

Առաջին իսկ փոփոխութիւնը երբ տեսայ, այդ նրա սիրուն գլուխն էր կոկիկ ու սանրած, որ այնպէս խառնել էր գոգակի տակ, կը նշանակէ տիկինը խաղացել էր նրա գլխի հետ, և այն էլ լաւ էր խաղացել... Աչքերը սևորակ էին ինչպէս միշտ, միայն ինձ թւաց թէ նրանք սովորականի պէս այլևս չեն փայլում կրքով. բարակ, քնքուշ կաշին դէմքի վրայ դէպի կարմիրն էր փոխել, և որ գլխաւորն է, նա սովորականի պէս շեշտակի շէր նայում աչքերիս, որովհետև վատնել էր ինձ պատկանող մի ոյժ, որ հաւասարապէս երկուսիս էլ էր...

Ես բարկացայ մի րոպէ, և յուզւած՝ որ եղածը այլևս չի կարելի յետ բերել, նայեցի դռների մէջ կանգնած տիկնոջը, որ մարմնացած



կանացիութիւնն էր ցուցադրում առփանքի մէջ, և որ անփութօրէն իբր թէ բացել էր կուրծքը... Իսկապէս, այդ բողբոջին ես էլ առնականութեամբ լցեցի դէպի նա, այնքան նա գեղեցիկ էր, և ինձ բուրբոջին մոռանալով՝ ուղեցայ արորել, աւրել նրան, որ իր մէջ թագցրել է մի ոյժ, որ ինձ էր պատկանում, և յետոյ այն հարցը, որ ամեն օր ես ականատես եմ լինում իմ սիրած աղամարդու եռանդի վաճաճան այս կնոջ հետ, ինձ բուրբոջին խենթացրեց. տանել այդ ցած պաշտօնը, աւելի քան անտանելի էր, լւել, երբ մէկը վայելում է կեանքի միկնոյն աղբիւրից մի քանի անգամ, իսկ միւսը ոչ, այդ էլ հօ վեր էր իմ ոյժերից, և ես կանացի բարկութեամբ լցած, ձգեցի դէպի նա համարեա թէ բղաւելով:

— Ինչո՞ւ չեո բաւականանում մէկով:

— Որո՞վ...

Ես այլևս ոչինչ չեմ յիշում, բացի այն խօսքից, որ տիկինը արտասանեց յուզմունքի մէջ, իսկապէս «որո՞վ», միթէ նա իրանը դեռ չի որոշել, և միթէ կարելի է կանգ առնել մէկի վրայ, երբ միկնոյն տիպին հազարներն են պատկանում...

IV.

Երէկ, ճաշից առաջ երբ նա եկաւ, երկրորդ դարկից յետոյ ես սովորականի պէս դիմաւորեցի նրան. առաջին իսկ գեղեցիկութիւնը, որ տեսայ, այդ նրա շրթունքներն էին, որ այնպէս հպել էր համարելու ձևով ինձ դիւթելու համար. այդպէս է օգային համբոյրներ ուղարկում նա ինձ, երբ մենակ ենք լինում. ես մօտեցայ և առանց վախելու, որ տիկինը կարող է նկատել, մի քանի անգամ քնքշաբար խփեցի նրա շրթերին ասելով:

— Այդ համբոյրները ինձ համար պահիր, անիրաւ:

Նա ժպտաց, և կէս իրական, կէս եթերային ձայնով հարցրեց:

— Պարօնը տանն է:

Այս անգամ ես չպատասխանեցի, և նա հասկանալով, որ ես չեմ ուզում հարց ու փորձը շարունակել տիկնոջ ուշադրութիւնը շքաբաւելու համար, շատ բարակ՝ ջուր ուղեց, պարզ ջուր, որը չգիտեմ ինչպէս լցեցի փարջի մէջ, և կրծքիս շուշանները մի քանի բողբոջ կախելով այնտեղ, բերի ու տւի նրան. նա խմեց մի փոքր, և մնացածը ամբողջապէս թափելով ինձ վրայ, հարցրեց:

— Դու վախեցար:

Ես հազիւ կարողացայ ինձ պահել, այնքան անսպասելի էր կա-

տարւածը, և ինձ բուրբոջին կորցնելով՝ սկսեցի ապուշ կտրած նայել նրան:

Նա դգաց այդ, և սիրաս շահելու համար սկսեց խօսացնել:

— Ի՞նչպէս է քո անունը:

Ես յիմարաբար պատասխանեցի:

— Լիլի:

Նա մի քանի անգամ շրթերի միջից հնչեցրեց այդ անունը, որ ես արտասանեցի, և փոքրիկ երեխայի նման ինձ դրողցնելու համար աւելացրեց:

— Գիտես, քո տիկինը բաւականին նման է քեզ:

Հէնց այդ նոյն բողբոջին լուեց տիկնոջ ձայնը, նոյնքան ասելի որքան ես, և նոյնքան վաճաւուղ, որքան կանացիութիւնը:

— Ա՛, այդ դո՞ւք էք, պ. X. մտէք խնդրում եմ:

Թուլացած, յուզած սրտով թողի նրանց, ու անցայ մանկանոց:

V.

Երբ խոհանոցից դուրս եկայ, նա արդէն գնացել էր. կրքոտ ու գզգզած տիկինն էր միայն ինձ դէմ, որ այնքան նախանձ էր շարժում իմ մէջ:

— Ճաշը պատրաստ է, դարձաւ նա ինձ:

— Այն:

Օ՛, այդ տիկինը, որ ոյժը վաճաւուղ յետոյ միշտ էլ կարէք է գզում ուտելու...

Ճաշի ժամանակ ես նայեցի նրան, նրա թաւ մտղերը, իրանը, կուրծքը, և այն սև ունքերի տակ երկու ամխացած աչքերը, որ այնքան գեղեցիկութիւն էին թափում սպիտակ գէմքի վրայ, և... իսկապէս որ նախանձեցի. ինձ հարկաւոր էր մի բան, որ կարողանար զրգուել իմ նախանձը դէպի նա, և ահա բաւական էր տեսնել նրա գէմքը, և ես մօտ գնացի, խրոխտ որպէս առնականութիւն, և հպարտ՝ որպէս ժառը, յիշեցնելու նրան իր պարտականութիւնը:

— Լսիր, դու իրաւունք չունես:

Երկրորդ օրն էր ինչ որ սովորել էի խօսիլ նրա հետ իբրև կին, հաւասար ու ընկերաբար:

— Ինչպէս...

Պատասխանեց նա մի այնպիսի ձևով, որ կարծում էիր թէ ամենաթանկագին բանն ես խլում նրա գրկից. և իսկապէս նրա սև-



բակ աշբերը վառեցին, և ես նրանց մէջ կարգացի պարզ ինձ չը գիջող պատասխանը.

— Ինչպէս թէ իրաւունք չունեմ:

Ես լսեցի, և ամեն ինչ թողնելով պատահականութեան, լուռ քաշեցի իմ խոհանոցը:

VI.

Այսօր, երբ նա թարմացած առաւօտեան ժամի տասին եկաւ բաղխելու դուռը, սովորականի պէս, բայց մի փոքր ախտը, ես գարձեալ դիմաւորեցի նրան. նա ձեռքին ծաղիկներ ունէր, և ասաց որ ընտրեմ ինձ համար, որը ցանկանում եմ, իսկ մնացածը ուղարկեմ տիկնոջը, ինձ բոլորովին նման, ու գեղեցիկ տիկնոջը: Ես ընտրեցի մի քանի մեխակներ և մի շուշան միայն, ու մնացածը, ասացի, որ կարող է յանձնել նրան:

Նա գարմացաւ:

— Միթէ նարգիսներ չես սիրում դու:

— Ո՛չ:

— Իսկ ես գնեցի նրանց միայն քեզ համար:

Այդ բոպէին ննջարանից լսեց կիտամերկ տիկնոջ խանդոտ ձայնը:

— Ա՛, ան, նախ նրան, յետոյ ինձ:

Ես իմ հերթին լսեցի, սպասելով իմ սիրած տղամարդու բացատրութեան, բայց նա այս անգամ կեղծեց, և սովորականից վատ կեղծեց:

— Ո՛չ, ես այդ թողնում եմ ձեր երկուսի ընտրութեան, ինչ կը ցանկանաք դուք:

Ես վերաւորեցի, ինչպէս կը վերաւորէր մի ազջիկ ասպետի գրկում, երբ տեսնէր որ իր սիրածը խաղում է իր այտերի հետ, և գոռոզ որպէս յաղթահարած գինուր, նետեցի ծաղիկները նրա սանրի տակ, և անցայ խոհանոցին կից իմ ննջարանը:

VII.

Երկրորդ օրն է, չկայ նա, բայց ահա լուսամտից տեսնում եմ մի սուտեր, որ և նմանեցնում եմ նրան. այդ նա է գալիս դէպի մեզ, գնում եմ դիմաւորելու: Ուրբան էլ զղելիս լինեմ նրանից, այնուամենայնիւ մի ոյժ ինձ ձգում է դէպի նա, և ես այդ բացատրում եմ իմ

հասակի կատարեալ հասունութեամբ, որտեղ կիրքն է խօսում արդէն, երիտասարդին յատուկ կիրքը: Նախկին օրերի խանդոտութիւնը այլևս չկայ, ինչ է այս Աստուած իմ, միթէ հաշտեցի եղածի հետ որի դէմ երէկ մարտնչում էի, գիտեմ որ ոչ. թեթե քայլերով որպէս եզնիկ մօտենում եմ դռանը, և վարսերս արձակ են՝ որպէս ծովից դուրս եկող մի կատարեալ յաւերժահարս, սիրտս խփում է, որի վրայ ձեռքս եմ դնում շուշանափայլ ու մաքուր, որպէս բոլոր օրերի լոյսը, և կամացուկ որպէս սուտեր, դռան հակից ուզում եմ խաբել իցձ:

— Ո՞վ է:

— Պարոնը տանն է:

Նոյն հէքեաթային ու կէս-իրական ձայնը:

— Ա՛խ դու չարածճի, ո՛չ, ո՛չ, ասում եմ:

Նա լրջացաւ, և առաջին նախադասութիւնը որ ասաց, հետեւեալն էր որ լուսնի նման յիշում եմ մինչև այսօր:

— Գիտես, ես որոշել եմ ձեզ հանգիստ թողնել առ միշտ:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ձեր պարոնը տանը չէ լինում յաճախ:

Ես ժպտացի, և վախենալով որ կարող է և ճիշտ լինել, մտերմաբար հարցրի.

— Իսկ եթէ տանը լինէր, ինչ պիտի ասէիր:

— Մի բան կը գտնէի, այ, օրինակ՝ հէնց ջուրթակը կուղէիր, որ քո քրծքին անշափ նման է...

Ես նայեցի այդ մարդուն, որ գեղեցիկ շրթունքների միջից ինձ արդէն ժպտում էր, և մտածեցի, որ նա խող է անում ինձ հետ, մի բարդ խաղ, որին շատերը դոհել են, և որից ես կուզեմայի հեռու մնալ. նա զգաց, որ սառը բանականութիւնն է խօսում իմ մէջ իմ արածի մասին, և սկսեց սիրաշոյել ինձ, մասամբ էլ խօսեցնել, որ և յաջողեց:

— Երէկ, անդգուշութեամբ երբ անցնում էի ննջարանով, իր անկողնում պառկած ձեր տիկնոջը տեսայ, նա այնպէս սպիտակ մարմին ունէր, որ ես ձիւն կարծեցի, մաքուր ձիւն, Գովկասի սարերում ընկած...

Նա—իմ քոյրն է, ասացի ես յիմարաբար, իբր թէ հասկացնելու համար, որ եթէ նա սպիտակ մարմին ունի, ապա ես էլ պիտի ունենամ:

— Ճիշտ, ես վաղուց է ինչ ձեր մէջ նմանութիւն էի որոնում, ասաց նա ուրախացած:



— Այ՛ն, և չէք սխալուել, ես ծառայում եմ քրոջս մօտ ամսականով:

Նոյն բոսային տիկինը առաջացաւ:

— Պիտի ուրիշին վարձէի, բայց որք աղջիկ էր, ասացի թէ սրան վերցնեմ, մանաւանդ որ քոյրս էլ էր:

— Չատ լաւ, եթէ այդպէս է, ես միշտ էլ կը գամ ձեզ մօտ, միշտ էլ...

Ասաց, ու հեռացաւ որպէս ամս կամ որպէս մշուշ, իմ երեւակայութեան մէջ թողնելով վառ հետք միայն. ես ներս գնացի մանկանոց, և ընկնելով Պետրոսի մահճակալի վրայ, սկսեցի մտածել: Այդ մարդը այլ ևս չէր ուզում այցելել մեզ, երբ ես դեռ իբրև ծառայող էի յայտնի, իսկ երբ իմացաւ որ ես և տիկինս քոյրն եմ, ուրեմն և ձիւնի նման սպիտակ մարմին կարող եմ ունենալ, ապա խոստացաւ չուտ-չուտ այցելել, որը ինձ կասկածների առիթ աւելցուց, — միթէ աշխատանքը ստորացնում է մարդուն...

VIII.

Երէկ, նրա գնալուց յետոյ, վեր առայ գրքերիս մէջ շորացրած մի ծաղիկ և դրի սեղանիս վրայ ու մտածեցի, թէ՛ տեսնեմ ինչպէս է վարում նա այդ խամբած գեղեցիկ կեանքի հետ: Ես յաճախ եմ սխալուել, բայց այս անգամ ինչ որ ենթադրում էի, կատարեց. միւս օրը վաղ առաւօտեան եկաւ նա, աւերոզ՝ որպէս մըրիկ, և կըքոտ՝ որպէս պատարնները հեղեղող գետ. ես լրջացած աչքս յառեցի մի ժամանակ իր ոտը դարդարող այդ ծաղիկին, և ասացի, որ սիրում եմ տարւել անծանօթ հողիներով, որոնք մի ժամանակ ապրել են նոյն արևի տակ, որի տակ և ես. նա տեսաւ այդ, և առնելով շորացած ծաղիկը, արօրեց և թափեց իմ ոտների տակ:

— Այդ ի՛նչ արե՛ր, հարցրի ես:

— Ես միայն իմ հասակի պարտքը կատարեցի:

— Ինչպէ՛ս:

— Եթէ չես համաձայնում, բաժանիք տիեզերքը հասակների, և թող մի տեղ երիտասարդները աւերմունք գործեն, իսկ մի ուրիշ տեղ ծերերը խաղաղութեան տենչան:

— Իսկ նրբութիւնն ու քնքշութիւնը...

— Է՛հ, ես նրանց վաղուց եմ տեսել աստղերի վրայ:

— Յիմար, լսեցականչեցի ես, ամեն մի կեանք, որքան էլ ան-

պէտք լինի նա, դարձեալ մի բանի է տենչում—հանգիստ մահւան, դու փոշի դարձրիք նրա շիրիմը, և կարծում ես նոյնը չի սպասում քեզ:

— Է՛հ, թողնենք ասաց նա, այդ. երևի կանանց ձեռքով:

— Այ՛ն, և իմ ձեռքով, պատասխանեցի ես հպարտ, ընդունելով միևնոյն աւերող ոյժը և ինձ մօտ:

Նա ինձ անպատասխան թողնելով գնաց դէպի տիկինը որպէս մի պատանի, որ իր հասակում անգամ զժւարանում է հասկանալ սէրը, և ես գնացի դուռը կողպելու, մի երջանիկ դոյզի նոր հաճօք պատճառելու համար...

IX.

Իր խոստման համաձայն այսօր նա նորից եկաւ, և առաջին իսկ լսօսքից. հարցրեց իմ առողջութիւնը. տիկինը նրան արօրելուց յետոյ այլևս բարեացակամ է դէպի ինձ. նա ուզում է իր պատանի մնացորդը ինձ ձգել, բայց ես հասկանում եմ նրան—ուրիշի դուներում վաճառած եռանդը ինձ հարկաւոր չէ: Առաջայ նման այլևս չեմ աշխատում նրան տիրել. միայն ուզում եմ յիշեցնել տիկինը որ նա հասարակութեան սթերի հետ պարտաւոր է խնայողաբար վարւել, մանաւանդ որ նա իրանը արդէն ունի. խենթ կըքոտ ժամեր էին այն մի քանի օրերը որ ես անցրի, այժմ այլևս նրանց չեմ փսսուում, բայց յիշում եմ որպէս քնքշութիւն, կամ որպէս հեղեղ, որ այնպէս հիասթափեցնել գիտէ սրտերը. դուռը սովորականի պէս ծեծում են, բայց ես չեմ դիմաւորում.—արժէ մօտեցնել կանացիութիւնն ու առնականութիւնը, երբ նրանք հաւասարապէս գաւաճանում են իրար. գնում եմ մի ուրիշ տուն ծառայելու, բայց թողնում եմ այս յուշատետրը որպէս բողոք կամ որպէս փորձ ինձ նման զժրախանների համար. թող կարգայ այս նա, ով հասկանում է աստղերի լեզուն, կամ ծովի ափին աւաղի վրայ ընկած՝ մի քանի բոսայ լուռ լսել է այիքների երգը. իմ սիրտը ես զրել եմ այս տողերում, և ուզում եմ որ նրան մօտենան բոլոր գրգռները, քանի սը նա աստղերից էլ պայծառ է, և մաքուր՝ քան տիեզերքի սիրտը, այ՛ն, և խիղճը մնաք բարի...



Այսպէս էր վերջանում այն յուշատետրը որ ինձ տուին կարդալու X տուն, և որ այնպէս գեղեցիկ կերպով բացեցի երիտասարդ սրտերի առաջ. թող կարդան նրանք բոլորը, և ինձպէս երգեն ամուսնանալ խոհարարուհիների հետ, քանի որ նրանք աւելի զրկւած են ու տանջւած քան ձիւնի նման սպիտակ մարմինները, և որ մեզ հարկաւոր է նախ տանջանքը պաշտել, և յետոյ մարդուն վնաս մարդուն:



ՀՀ Ազգային գրադարան



NL0368201



51713